ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2014- 02.07/249
02.07.2014 թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ
Վ.Շահինյանին

ԴԻՄՈՒՄ

(հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված
որոշում տրամադրելու պահանջի մասին)

Հարգելի պարոն Շահինյան,

2014թ. ապրիլի 2-ին կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն ՀՀ ԱՆ Արթիկ ՔԿՀ կալանավորներ Ռոբերտ Մուրադյանի, Անդրանիկ Մխիթարյանի և Ջոն Մարտիրոսյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից, նրանց նկատմամբ անմարդկային վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ:

Հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուց հետո, մինչ օրս հաղորդման հիման վրա կայացված որոշում կազմակերպությունը չի ստացել, չնայած այն հանգամանքին, որ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու օրվանից մինչ օրս անցել է 2 ամիս ժամանակ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

Նույն օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) քրեական գործ հարուցելու մասին.
2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.
3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին»:

Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը կարգավորում է նաև հաղորդման վերաբերյալ որոշում կայացնելու և տեղեկատվության տրամադրման կարգն այն դեպքում, երբ մերժվում է քրեական գործի հարուցումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին»:

Սույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին»:

Վերը շարադրվածից բխում է, որ թե՛ քրեական գործ հարուցելու, և թե՛ քրեական գործի հարուցումը մերժելու դեպքում օրենսդիրը պարտադիր է համարել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի կողմից համապատասխան որոշման կայացումը և դրա պատճենը հաղորդում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձին տրամադրելը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 181,182, 185-րդ հոդվածները՝

խնդրում եմ

տրամադրել կազմակերպության 02.04.2014թ. ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա կայացված որոշում:

Հարգանքներով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Չատինյան
achatinyan@hcav.am

ՀՔԱ Վանաձոր
HCA Vanadzor
06926024